ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

ԻՆՉ Է ՀԱՐԿԱՎՈՐ ԻՄԱՆԱԼ

Այս Գրքույկը ներկայացնում է՝

- Կարևոր տեղեկատվություն իրավունակության պահանջների մասին, որոնք պետք է բավարարվեն գործազրկության ապահովագրության նպաստներ ստանալու համար:
- Քայլ առ քայլ ուղեցույց. Ինչպես հաստատել իրավունակությունն ընթացիկ Գործազրկության ապահովագրության նպաստների համար:

Employment Development Department
State of California

www.edd.ca.gov

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ. ԻՆՉ Է ՀԱՐԿԱՎՈՐ ԻՄԱՆԱԼ

Դուք ստացել եք այս գրքույկը, որովհետև Գործազրկության ապահովագրության (Unemployment Insurance, UI) նպաստների հայց եք ներկայացրել Զբաղվածության զարգացման վարչությանը (Employment Development Department, EDD): Ձեր UI հայցն ուժի մեջ է մեկ տարի՝ սկսած այն շաբաթվա կիրակի օրվանից, որում ներկայացրել եք հայցը: Այս գրքույկը Ձեզ կօգնի հասկանալ հայցի գործընթացը, նպաստների վճարման պայմանները և Ձեր պարտականությունները նպաստների համար իրավունակությունը հաստատելիս:

UI ծրագիրը, որն ամբողջապես ֆինանսավորվում է գործատուների կողմից, աշխատավարձի մասնակի փոխհատուցում է տրամադրում այն աշխատողներին, ովքեր կորցրել են աշխատանքը և համապատասխանում են ծրագրի իրավունակության պահանջներին ամեն շաբաթ, երբ հաստատում են իրենց իրավունակությունը նպաստների համար:

➲ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Որպեսզի ունենաք հիմնավոր հայց և UI նպաստներ ստանալու իրավունք, Դուք պետք է համապատասխանեք դրամական միջոցների վերաբերյալ պահանջին՝ անցյալ 18 ամսվա ընթացքում աշխատած և վաստակած լինեք նվազագույն գումարի աշխատավարձեր: Բացի այդ, **պետք է** համապատասխանեք նահանգային օրենսդրությամբ սահմանված հետևյալ իրավունակության պահանջներին.

- **Գործազուրկ լինեք ոչ Ձեր մեղքով:** Եթե ընդհատել եք Ձեր վերջին աշխատանքը կամ ազատվել եք այդ աշխատանքից, դուրս եք եկել Ձեր վերջին աշխատանքից կամ այն թողել եք արհմիության և գործատուի միջև ծագած աշխատանքային վեճի կամ գործադուլի պատճառով, ապա Ձեզ կնշանակվի հեռախոսային հարցազրույցի օր և ժամ:
- **Լինեք աշխատելու ունակ և աշխատանքի համար հասանելի:** Դուք պետք է ֆիզիկապես ունակ լինեք աշխատելու և ի վիճակի լինեք աշխատել: Շատ դեպքերում պահանջվում է աշխատել լրիվ դրույքով: Եթե ունակ կամ ի վիճակի չեք աշխատել լրիվ դրույքով, ապա կնշանակվի հեռախոսային հարցազրույցի օր և ժամ:
- **Պատրաստ լինեք ընդունելու հարմար աշխատանք:** Դուք պետք է պատրաստ և հոժար լինեք ընդունելու որևէ աշխատանքի առաջարկ Ձեր սովորական մասնագիտությամբ: Եթե աշխատանքի առաջարկը մերժեք, ապա Ձեզ կնշանակվի հեռախոսային հարցազրույց:
- **Ակտիվորեն աշխատանք փնտրեք:** Դուք պետք է ակտիվորեն աշխատանք փնտրեք: Աշխատանքի որոնումը կարող է ներառել աշխատանքին ծանոթանալու նպատակով կապի հաստատում գործատուների հետ՝ առերես, փոստով, հեռախոսով կամ ինտերնետով: Դա նաև ներառում է աշխատանքի որոնում ինտերնետում, լրագրերում կամ այլ հրատարակված նյութերում և կապի հաստատում նախկին գործատուների հետ՝ թափուր աշխատատեղերի մասին տեղեկանալու համար: Եթե մեկ շաբաթվա ընթացքում աշխատանք չփնտրեք, ապա Ձեզ կնշանակվի հեռախոսային հարցազրույց:

➲ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ, ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Եթե UI հայցը ներկայացնելուց հետո հարց ծագի Ձեր իրավունակության վերաբերյալ, Ձեզ կնշանակվի հեռախոսային հարցազրույց EDD-ի ներկայացուցչի հետ՝ որոշելու համար՝ արդյոք նպաստներ ստանալու իրավունք ունեք: Ձեզ կուղարկվի *Notification of Unemployment Insurance Benefits Eligibility Interview*, DE 4800, (Գործազրկության ապահովագրության նպաստներ ստանալու իրավունակությունը որոշելու հարցազրույցի ծանուցում), որում նշված կլինեն հարցազրույցի ամսաթիվն ու ժամը: EDD-ի ներկայացուցիչը նշանակված օրը և ժամին կզանգի Ձեզ:

Եթե EDD-ն որոշի, որ նպաստներ ստանալու իրավունք չունեք, Ձեզ կուղարկվի *Notice of Determination*, DE 1080, (Ծանուցագիր որոշման մասին)՝ նշելով նպաստների մերժման պատճառը (պատճառները), և *Appeal Form*, DE 1000M, (Բողոքարկման ձև): Եթե համաձայն չեք որոշմանը, Դուք իրավունք ունեք որոշումը բողոքարկելու և լսումների պահանջով դիմելու երրորդ կողմ հանդիսացող անկախ Վարչական իրավախախտումների գործերով դատավորին (Administrative Law Judge)՝ Կալիֆոռնիա նահանգի Գործազրկության ապահովագրության հարցերի բողոքարկման խորհրդից (California Unemployment Insurance Appeals Board): Լրացրեք *Appeal Form* (Բողոքարկման ձևը) և *Notice of Determination* (Որոշման մասին ծանուցագրի) փոստային առաքման թվականից հետո 30 օրվա ընթացքում ծանուցագրում տրված հասցեով ուղարկեք ձևը կամ նամակ՝ նշելով Ձեր անունը, սոցիալական ապահովության քարտի համարը և պատճառը, թե ինչու համաձայն չեք որոշմանը:

➲ ՀԱՅՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ UI ONLINE℠ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

Ձեր հայցը ներկայացնելուց հետո կարող եք օրը 24 ժամ, շաբաթը 7 օր օգտվել UI Online℠ համակարգից՝ նպաստների համար իրավունակությունը հաստատելու, հայցի և վճարման վերաբերյալ ամենաթարմ տվյալները ստանալու, ընթացիկ հայցը վերաբացելու, ժամադրությունները վերանայելու, հեռախոսային հարցազրույցների նոր օր ու ժամ նշանակելու և այլ նպատակների համար: Նաև կստանաք կարևոր ծանուցումներ, օրինակ՝ հիշեցումներ նպաստների համար իրավունակությունը հաստատելու մասին: Որպես հավելյալ հարմարավետություն, UI Online Mobile℠ ծառայություն է տրամադրվում սմարթֆոն և պլանշետ օգտագործողներին: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և Ձեր UI Online℠ հաշիվը մուտք գործելու համար այցելեք **www.edd.ca.gov/UI_Online**:

➲ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

UI հայց ներկայացնելուց հետո պետք է **ամեն երկու շաբաթը մեկ հաստատեք**, որ շարունակում եք համապատասխանել իրավունակության պահանջներին, որպեսզի նպաստներ վճարվեն Ձեզ: EDD-ն փոստով Ձեզ կուղարկի տպագիր *Continued Claim Form*, DE 4581, (Շարունակական հայցի ձև), որպեսզի իրավունակությունը հաստատեք փոստով, բայց EDD-ն խորհուրդ է տալիս դա անել առցանց՝ օգտվելով UI Online℠ համակարգից **www.edd.ca.gov/UI_Online** հասցեում, որովհետև դա իրավունակություն հաստատելու արագ, հարմար և ապահով միջոց է: Նաև կարելի է իրավունակությունը հաստատել հեռախոսով՝ օգտվելով EDD Tele-Cert℠-ից 1-866-333-4606 համարով:

Կարևոր է. *Հավաստագրերի ավելի արագ մշակման համար դրանք ներկայացրեք ժամանակին՝ Ձեր հայցի ձևաթղթի վրա նշված «լրացրեք և փոստով ուղարկեք այս ձևը» ամսաթվից հետո 14 օրվա ընթացքում: Իրավունակության շուտ կամ ուշ հաստատումը կարող է հանգեցնել նպաստների հետաձգման կամ մերժման:*

Նկատի ունեցեք. եթե գործատուն Ձեզ տալիս է Մասնակի կամ Աշխատանքի բաշխման հայցի ձև, որպեսզի լրացնեք և փոստով ուղարկեք EDD-ին, ապա չեք կարող իրավունակությունը հաստատել առցանց կամ հեռախոսով: Այնուամենայնիվ, դեռ հնարավոր կլինի օգտվել UI Online℠-ով և հեռախոսով հասանելի ինքնասպասարկման այլ հնարավորություններից:

Եթե իրավունակության բոլոր պահանջները բավարարվում են, նպաստների վճարումը կկատարվի հաստատումը ստանալուց հետո: Եթե նպաստների համար իրավունակությունը հաստատելուց հետո 10 օրվա ընթացքում չստանաք վճարում, ապա հավանաբար պատճառն այն է, որ հարց է առաջացել Ձեր իրավունակության վերաբերյալ, և հնարավոր է, որ ստանաք *Notice of Unemployment Insurance Benefits Eligibility Interview*, DE 4800, (Գործազրկության ապահովագրության նպաստներ ստանալու իրավունակությունը որոշելու հարցազրույցի ծանուցում):

➲ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՍԿԱՆԱԼԸ

Այս բաժինը Ձեզ կօգնի հասկանալ UI նպաստների համար իրավունակությունը հաստատելու ժամանակ տրվող հարցերը: Ձեր պատասխաններն օգտագործում է EDD-ն, որպեսզի որոշի նպաստների վճարումներ ստանալու Ձեր շաբաթական իրավունակությունը: Բոլոր հարցերին տվեք ճշմարիտ և ստույգ պատասխաններ, որպեսզի խուսափեք UI խարդախություն կատարելուց: Լրացուցիչ տեղեկությունների համար տես «Նպաստ ստանալու հետ կապված խարդախության կանխում» բաժինը 6-րդ էջում: Տպագիր ձևաթուղթը փոստով ուղարկելու փոխարեն՝ կարող եք իրավունակությունը հաստատել UI Online℠ համակարգով՝ ավելի արագ մշակման համար այցելելով **www.edd.ca.gov/UI_Online**, կամ 1-866-333-4606 համարով EDD Tele-Cert℠ զանգելով: Եթե նպաստներ ստանալու իրավունակությունը հաստատում եք *Continued Claim Form*, DE 4581, (Շարունակական հայցի ձև) տպագիր ձևաթղթով, ուշադիր ուսումնասիրեք ձևը, որպեսզի համոզվեք, որ ձևում նշված յուրաքանչյուր շաբաթվա համար պատասխանել եք բոլոր հարցերին, և որ ձևաթուղթը ստորագրված է:

ՀԱՐՑ 1. Դուք եղե՞լ եք աշխատելու համար չափազանց հիվանդ կամ մնասվածք ստացած:
Եթե այո, մուտքագրեք օրերի քանակը (1-ից մինչև 7), երբ ի վիճակի չեք եղել աշխատել:

Պատասխանեք «Այո», եթե՝	Դուք անկարող էիք աշխատել հիվանդության կամ մնասվածքի պատճառով: Կամ ստիպված էիք եղել հիվանդության կամ մնասվածքի պատճառով հետաձգել նոր աշխատանք սկսելը:
Պատասխանեք «Ոչ», եթե՝	Դուք ֆիզիկապես ունակ կլինեիք ամեն օր աշխատելու, եթե աշխատանք ունենայիք, կամ մտադիր էիք սկսել նոր աշխատանք:
Մանրամասներ.	• Դուք պետք է բավականաչափ լավ լինեք շաբաթվա ամեն օրն աշխատելու համար, որպեսզի ստանաք UI նպաստներ: • Նպաստները վճարվում են ըստ այն օրերի քանակի, երբ Դուք ի վիճակի եք աշխատել տվյալ շաբաթվա ընթացքում: Ձեր նպաստները կրճատվում են մեկ յոթերորդով յուրաքանչյուր օրվա համար, որի ընթացքում չեք կարող աշխատել հիվանդության կամ մնասվածքի պատճառով:

ՀԱՐՑ 2. Եղե՞լ է որևէ այլ պատճառ (հիվանդությունից կամ մնասվածքից տարբեր), որը թույլ չի տվել լրիվ աշխատաժամանակով աշխատանք ընդունել յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

Պատասխանեք «Այո», եթե՝	Դուք չէիք կարող աշխատանքն իսկույն ընդունել ինչ-որ մի պատճառով, օրինակ՝ երեխայի խնամքն իրականացնողի կամ տրանսպորտային միջոցի բացակայության, կամ այն պատճառով, որ խնամել եք ընտանիքի հիվանդ անդամին, զբաղվել եք անձնական գործերով կամ եղել եք արձակուրդում:
Պատասխանեք «Ոչ», եթե՝	Դուք պատրաստ էիք և ցանկություն ունեիք ընդունելու Ձեր մասնագիտական հմտություններին և (կամ) կրթական մակարդակին համապատասխանող աշխատանք: Եթե գործ առաջարկվեր, չէր լինի այն ընդունելուն խանգարող որևէ հանգամանք:
Մանրամասներ.	• Դուք պետք է ի վիճակի լինեք աշխատել, որպեսզի ստանաք UI նպաստներ: «Ի վիճակի լինել» նշանակում է՝ Դուք պատրաստ եք և ցանկություն ունեք աշխատանք ընդունելու: • Նպաստներ վճարվում են այն դեպքում, եթե կարող եք ընդունել լրիվ դրույքով աշխատանք, սակայն կան հանգամանքներ, երբ Դուք կարող եք Ձեզ սահմանափակել ոչ լրիվ աշխատաժամանակով և, այնուամենայնիվ, ստանալ նպաստներ: Այդ դեպքում Դուք լրացուցիչ տեղեկություններ կստանաք EDD-ից:

ՀԱՐՑ 3. Դուք աշխատանք փնտրե՞լ եք:

Պատասխանեք «Այո», եթե՝	Դուք աշխատանք եք փնտրել այս շաբաթ: Աշխատանքի որոնումը ներառում է՝ կապ հաստատել գործատուների հետ և հետաքրքրվել աշխատանքի մասին առերես, փոստով, հեռախոսով կամ ինտերնետով: Դա նաև ներառում է աշխատանքի որոնում ինտերնետում, լրագրերում կամ այլ հրատարակված նյութերում և կապի հաստատում նախկին գործատուների հետ՝ թափուր աշխատատեղերի մասին տեղեկանալու և աշխատանքի ընդունվելու դիմումներ ներկայացնելու համար: Եթե արհմիության անդամ եք, ապա պետք է «այո» պատասխանեք այս հարցին, եթե գրանցված եք եղել արհմիությունում և բավարարել եք արհմիության հաշվետվության և աշխատանքների կատարման պահանջները:
Պատասխանեք «Ոչ», եթե՝	Դուք կապ չեք հաստատել գործատուների հետ, որևէ դիմում չեք հանձնել կամ թափուր աշխատատեղեր չեք փնտրել ամբողջ շաբաթվա ընթացքում: Եթե արհմիության անդամ եք, ապա պետք է «ոչ» պատասխանեք այս հարցին, եթե գրանցված չեք եղել արհմիությունում և (կամ) չեք բավարարել արհմիության հաշվետվության և աշխատանքների կատարման պահանջները:
Մանրամասներ.	• Հարկավոր չէ աշխատանքի որոնման տվյալներն ամեն շաբաթ ներկայացնել EDD-ին, բայց պետք է կատարեք գրառումներ, որոնք կկարողանաք անմիջապես տրամադրել, եթե EDD-ն աշխատանքի որոնումների վերաբերյալ տեղեկատվություն պահանջի Ձեզնից: Հետևեք աշխատանքի որոնման վերաբերյալ հրահանգներին, որոնք շարադրված են *Notice of Unemployment Insurance Award*, DE 429Z, («Գործազրկության ապահովագրություն շնորհելու մասին») ծանուցագրում: • Եթե որոշել եք իրավունակությունը հաստատել տպագիր ձևաթղթով, և EDD-ն վանդակը նշել է “X”-ով, ապա պետք է ձևի դարձերեսին լրացնեք Բ բաժինը՝ «Աշխատանքի որոնման տվյալներ»:

ՀԱՐՑ 4. Դուք մերժե՞լ եք որևէ աշխատանք:

Պատասխանեք «Այո», եթե՝	Դուք այս շաբաթվա ընթացքում մերժել եք գործատուից ստացված հարմար աշխատանքի առաջարկ: Եթե Դուք արհմիության անդամ եք և մերժել եք արհմիության աշխատանքի ուղեգիրը, պատասխանեք «այո»:
Պատասխանեք «Ոչ», եթե՝	Դուք այս շաբաթ չեք մերժել աշխատանքի որևէ առաջարկ: Դա նշանակում է, որ Դուք չեք ստացել աշխատանքի առաջարկ կամ ստացել եք առաջարկ և ընդունել եք այն:
Մանրամասներ.	• Դուք պետք է հոժար լինեք ընդունելու հարմար աշխատանք, որպեսզի ստանաք UI նպաստներ: • Եթե մերժեք Ձեր մասնագիտությանն ու կրթական մակարդակին համապատասխանող աշխատանքի առաջարկը, ապա հնարավոր է, որ նպաստներ ստանալու իրավունք չունենաք:

ՀԱՐՑ 5. Դուք սկսե՞լ եք հաճախել որևէ տեսակի դպրոց կամ վերապատրաստման դասընթաց:

Պատասխանեք «Այո», եթե՝	Դուք **սկսել եք** դպրոց կամ վերապատրաստման դասընթաց հաճախել **այս** շաբաթ: Պատասխանեք «այո» միայն այն դեպքում, եթե այս շաբաթվա ընթացքում սկսել եք նոր սեմեստր կամ նոր դասընթաց:
Պատասխանեք «Ոչ», եթե՝	Դուք **չեք սկսել** որևէ տեսակի դպրոց կամ վերապատրաստման դասընթաց հաճախել **այս** շաբաթ: Պատասխանեք «ոչ», եթե այս շաբաթվա ընթացքում չեք սկսել սեմեստր կամ նոր դասընթաց, կամ սեմեստրը կամ դասընթացը սկսելու ժամանակ շարունակել եք հաճախել նախկինում զեկուցված դպրոց կամ վերապատրաստման դասընթաց:
Մանրամասներ.	• Զեկուցեք դպրոցի կամ վերապատրաստման դասընթացի մասին միայն այն շաբաթվա համար, երբ Դուք փաստացի սկսել եք հաճախել: • Նպաստներ վճարվում են, երբ Դուք ի վիճակի եք աշխատանք ընդունել՝ անկախ որևէ դպրոց կամ վերապատրաստման դասընթացի հաճախելու հանգամանքից: • Դպրոցի կամ վերապատրաստման դասընթացի մասին զեկուցելու օրինակներին ծանոթանալու համար այցելեք «Հաստատել UI նպաստներ ստանալու իրավունակությունը» (Certify for UI Benefits) էջը EDD-ի կայքում՝ **www.edd.ca.gov/unemployment**:

ՀԱՐՑ 6. Դուք աշխատե՞լ եք կամ փող վաստակե՞լ եք՝ անկախ վճարված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Պատասխանեք «Այո», եթե օգտագործում եք՝	**UI Online℠, և** առկա է ստորև նշվածներից որևէ մեկը՝ • Դուք աշխատել եք. • Դուք **փող եք վաստակել կատարված աշխատանքի համար***: • Դուք աշխատել եք և ստացել եք ցանկացած **այլ տեսակի եկամուտ***: • Դուք **փող եք վաստակել կատարված աշխատանքի համար*** և ստացել եք ցանկացած **այլ տեսակի եկամուտ***:	**Տպագիր *Continued Claim Form* (Շարունակական հայցի ձև), և** առկա է ստորև նշվածներից որևէ մեկը՝ • Դուք աշխատել եք. • Դուք **փող եք վաստակել կատարված աշխատանքի համար***. • Դուք ստացել եք ցանկացած **այլ տեսակի եկամուտ***: Մուտքագրեք 6ա և 6բ կետերի վերաբերյալ տեղեկությունները:
Պատասխանեք «Ոչ», եթե օգտագործում եք՝	**UI Online℠, և** առկա է ստորև նշվածներից որևէ մեկը՝ • Դուք չեք աշխատել. • Դուք **փող չեք վաստակել կատարված աշխատանքի համար***: • Դուք չեք աշխատել, **բայց** ստացել եք ցանկացած **այլ տեսակի եկամուտ***: Երբ պատասխանեք «ոչ», կտրվի մեկ այլ բաժին, որպեսզի UI Online℠ համակարգում մուտքագրեք այլ տեսակի եկամուտները:	**Տպագիր *Continued Claim Form* (Շարունակական հայցի ձև), և առկա են ստորև նշվածներից բոլորը՝** • Դուք չեք աշխատել: • Դուք փող չեք վաստակել կատարված աշխատանքի համար. • Դուք չեք ստացել ցանկացած այլ տեսակի եկամուտ*: **Մի** մուտքագրեք 6ա կամ 6բ կետերի վերաբերյալ տեղեկությունները:
Մանրամասներ.	• Դուք պետք է զեկուցեք բոլոր աշխատանքների ու եկամուտների մասին (փող՝ կատարված աշխատանքի համար, և ցանկացած այլ տեսակի եկամուտ), **նույնիսկ եթե վճարում չեք ստացել գործատուից**: ***Փող՝ կատարված աշխատանքի համար.** Սա ներառում է կանոնավոր վաստակները, տնային աջակցության ծառայությունները, թեյավճարները, միջնորդավճարները, զինծառայողի ռոճիկը, ինքնազբաղվածությունը կամ անկախ պայմանագրային աշխատանքի վարձատրությունը, աշխատանքի դիմաց տրվող կերակուրները և կացարանը, կրթաթոշակները, ձեռնարկության կամ արհմիության պաշտոնյայի ռոճիկը, առաջադիրքերը պահող զինվորականի ռոճիկը, և գործավճարը: ***Այլ տեսակի եկամուտ.** Սա ներառում է կենսաթոշակները, մնացորդային վճարները, հետագա օգտագործման իրավունքի համար տրվող հոնորարները, արձակման վճարը, արձակուրդային վճարը, երդվյալ ատենակալի վարձատրությունը, հիվանդության նպաստը, տոնական օրը կատարված աշխատանքի վարձատրությունը, արտադրական մնասվածքի փոխհատուցումը, պարգևավճարները, հարկադրական պարապուրդի համար վճարումը, վկայի վարձատրությունը, շահույթի բաշխումը, արտոնագրային վճարները, գործադուլավորներին տրվող նպաստները և այլն:	

ՀԱՐՑ 6, ԿԵՏ 6Ա. Այստեղ մուտքագրեք եկամուտները՝ նախքան պահումները:

Ցուցումներ.

- **Համախառն հասույթ.** Զեկուցեք համախառն հասույթը (ամբողջ վաստակած փողը կամ եկամուտը՝ **նախքան հարկերի վճարումը կամ ցանկացած այլ հանումներ**): Եթե չգիտեք, թե որքան է կազմում Ձեր համախառն հասույթը, հարցրեք գործատուին:
- **Զեկուցեք կիրակիից մինչև շաբաթ.** Դուք պետք է զեկուցեք Ձեր աշխատանքի և հասույթի մասին՝ ըստ հաստատման ձևում ընդունված ժամանակաշրջանի. մեկնարկի օրը՝ կիրակի, ավարտի օրը՝ շաբաթ: Եթե Ձեր աշխատավարձի շաբաթը կիրակիից մինչև շաբաթ օրը Չէ, ապա EDD-ն խորհուրդ է տալիս գրանցել յուրաքանչյուր օրվա աշխատանքն ու վաստակած փողը, որպեսզի ճիշտ զեկուցեք աշխատանքի և հասույթի մասին:
- **Հաշվեք հասույթը.** Դուք պետք է զեկուցեք Ձեր համախառն հասույթը՝ նախքան հանումները: Շատ դեպքերում կարող եք աշխատավարձերի ընդհանուր գումարը հաշվել՝ աշխատած ժամերը ժամավճարով բազմապատկելով: Օրինակ՝ եթե 10 ժամ եք աշխատել *Continued Claim Form* (Շարունակական հայցի ձևում) սահմանված կիրակի-շաբաթ ժամանակաշրջանում և վճարվել եք ժամում $12, ապա զեկուցման ենթակա աշխատավարձերը կլինեն $120: Զեկուցեք այն աշխատավարձերը, որոնք ստացել եք փաստացի շաբաթվա ընթացքում, երբ աշխատանք եք կատարել և աշխատավարձեր եք ստացել, այլ ՈՉ ԹԵ վճարը ստանալու պահի աշխատավարձերը:
- **Մեկից ավելի գործատու.** Եթե աշխատել եք մեկից ավելի գործատուների համար, միավորեք յուրաքանչյուր գործատուից ստացված հասույթը, որպեսզի իմանաք ամբողջ հասույթի գումարը: Օրինակ՝ եթե *Continued Claim Form* (Շարունակական հայցի ձևում) սահմանված կիրակի-շաբաթ ժամանակաշրջանում 10 ժամ աշխատել եք ABC ընկերության համար՝ ժամում $10 վարձավճարով և 12 ժամ՝ XYZ ընկերության համար՝ ժամում $10 վարձավճարով, ապա զեկուցման ենթակա աշխատավարձերի ընդհանուր գումարը կլինի $220:
- **$999,99-ը գերազանցող հասույթ.** Եթե Ձեր հասույթը կազմում է $1000,00 կամ ավելի, ապա հասույթի համար հատկացված վանդակներում մուտքագրեք $999,99:
- **Ոչ լրիվ դրույքով և լրիվ դրույքով աշխատանք.** Եթե աշխատում եք ոչ լրիվ աշխատաժամանակով, հնարավոր է, որ ստանաք UI նվազեցված նպաստներ, նույնիսկ եթե Ձեր եկամուտներն ավելի բարձր են, քան շաբաթական նպաստի գումարը: EDD-ն կհաշվարկի Ձեր շաբաթական նպաստի գումարից հանվող գումարը, և Ձեզ կվճարվի տարբերությունը, եթե լինի որևէ տարբերություն: Եթե EDD-ն պարզի, որ նպաստների վճարման համար չափազանց շատ գումար եք վաստակել կամ վերադարձել եք ոչ լրիվ դրույքով աշխատանքի, ապա Ձեր UI հայցը կարող է կորցնել ուժը: EDD-ն Ձեզ կծանուցի այն մասին, որ չափազանց շատ գումար եք վաստակել, և Դուք չեք ստանա հաջորդ շաբաթներն իրավունակությունը հաստատելու համար: Եթե նորից եք ուզում հաստատել նպաստներ ստանալու իրավունակությունը, ապա նախ պետք է վերաբացեք Ձեր հայցը: Հայցի վերաբացման վերաբերյալ տեղեկատվությունը՝ 6-րդ 6 էջում:
- **Սխալների մասին հայտնեք EDD-ին.** Եթե սխալ տվյալներ եք զեկուցել Ձեր հասույթի մասին, անմիջապես կապվեք EDD-ին:

ՀԱՐՑ 6, ԿԵՏ 6Բ. Զեկուցեք տեղեկություններ զբաղվածության և վաստակի աղբյուրի մասին:

Ցուցումներ.

Դուք պետք է հայտնեք Ձեր գործատուի կամ հասույթի աղբյուրի մասին տեղեկություններ՝ ըստ հաստատման ձևում ընդունված ժամանակաշրջանի. **մեկնարկի օրը՝ կիրակի, ավարտի օրը՝ շաբաթ**:

- **Վերջին աշխատանքի ամսաթիվը.** Մուտքագրեք աշխատած վերջին օրը: Եթե նույն շաբաթվա ընթացքում աշխատել եք մեկից ավելի գործատուների մոտ, մուտքագրեք վերջին օրը, երբ ֆիզիկապես աշխատել եք այդ շաբաթվա ընթացքում, և վերջին գործատուի անունն ու հասցեն, ում մոտ ֆիզիկապես աշխատել եք այդ շաբաթվա ընթացքում:
- **Ընդհանուր աշխատած ժամաքանակը.** Մուտքագրեք աշխատած ժամերի ընդհանուր քանակը: Միավորեք յուրաքանչյուր գործատուի մոտ աշխատած ժամերը, որպեսզի ստանաք այդ նույն շաբաթվա ընթացքում աշխատած ժամերի ընդհանուր քանակը: Օրինակ՝ եթե այդ շաբաթում 10 ժամ աշխատել եք ABC ընկերության համար և 12 ժամ XYZ ընկերության համար, զեկուցեք այդ շաբաթում ընդամենը աշխատած 22 ժամը: Եթե չեք աշխատել, այս վանդակը թողեք չլրացված:
- **Գործատուի անունը և փոստային հասցեն.** Մուտքագրեք Ձեր գործատուի տվյալները կամ հասույթի աղբյուրը (ումից եք ստացել հասույթը):
- **Այլևս չաշխատելու պատճառը.** Եթե աշխատավարձեր եք ստացել կատարված աշխատանքի համար և այլևս չեք աշխատում, մուտքագրեք այլևս չաշխատելու պատճառը: Եթե աշխատավարձեր եք ստացել և դեռ աշխատում եք, մուտքագրեք "still working" («դեռ աշխատում եմ»): Եթե ստացել եք այլ տեսակի եկամուտներ, բայց չեք աշխատել, մուտքագրեք ստացած եկամտի տեսակը (օրինակ՝ արձակման վճար, փոխհատուցում՝ առանց նախնական ծանուցման ազատելու համար, մնացորդային վճարներ և այլն):
- **Լրացուցիչ տեղեկություններ.** Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու և աշխատավարձերի մասին զեկուցելու օրինակներին ծանոթանալու համար այցելեք «Հաստատել UI նպաստներ ստանալու իրավունակությունը» (Certify for UI Benefits) էջը EDD-ի կայքում՝ **www.edd.ca.gov/unemployment**:

ՀԱՐՑ 7. Դաշնային եկամտահարկ.

Ցուցումներ.

Գործազրկության ապահովագրությունը ենթակա է հարկման և պետք է զեկուցվի դաշնային եկամտահարկի հայտարարագրում: (Լրացուցիչ տեղեկությունների համար հարկավոր է դիմել Ներքին եկամուտների ծառայությանը (Internal Revenue Service) կամ Ձեր հարկային խորհրդատուին): Կարող եք որոշել, որ կատարվի դաշնային եկամտահարկի պահում Ձեր UI նպաստներից: Եթե ուզում եք, որ շաբաթվա (շաբաթների) համար պահվեն դաշնային եկամտահարկեր, ապա UI Online℠ համակարգում կամ տպագիր ձևաթղթի վրա նշեք վանդակը կամ «այո» պատասխանեք EDD Tele-Cert℠ ձևում: Այս վանդակը դատարկ թողեք UI Online℠ համակարգում կամ տպագիր ձևաթղթի վրա կամ «ոչ» պատասխանեք EDD Tele-Cert℠ ձևում, եթե չեք ուզում դաշնային եկամտահարկերի պահում:

ՀԱՐՑ 8. Փոստային հասցեի կամ հեռախոսահամարի փոփոխություն.

Ցուցումներ.

EDD-ում գրանցված փոստային հասցեն կամ հեռախոսահամարը փոխելու համար կարող եք օգտվել UI Online℠ համակարգից կամ տպագիր ձևաթղթից: Ձեր փոստային հասցեն կամ հեռախոսահամարը փոխելու ամենաարագ եղանակը UI Online℠ համակարգն է **www.edd.ca.gov/UI_Online** կայքէջում: UI Online℠-ի միջոցով կարող եք ցանկացած ժամանակ թարմացնել Ձեր փոստային հասցեն կամ հեռախոսահամարը: Եթե իրավունակությունը հաստատում եք տպագիր ձևաթղթով, ձևաթղթի հետևի կողմում նշեք վանդակը և լրացրեք տեղեկությունները:

➲ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄ

Ձեր հայցը պետք է սպասի մեկ շաբաթվա անվճար սպասման ժամանակաշրջան, նախքան Ձեզ կվճարվեն UI նպաստները: Սպասման ժամանակաշրջանը կարող է տրամադրվել միայն այն դեպքում, եթե հաստատեք նպաստներ ստանալու իրավունակությունը և բավարարեք տվյալ շաբաթվա իրավունակության բոլոր պահանջները: Սովորաբար, Ձեր առաջին հաստատումը ներառելու է մեկ շաբաթվա անվճար սպասման ժամանակաշրջանը և վճարման մեկ շաբաթը, եթե համապատասխանեք իրավունակության պահանջներին երկու շաբաթվա համար: **Ամեն երկու շաբաթը մեկ հաստատեք նպաստներ ստանալու իրավունակությունը, որպեսզի շարունակեք նպաստների վճարումներ ստանալ:**

Դուք ունեք նպաստի վճարումների ստացման եղանակն ընտրելու հնարավորություն՝ EDD-ն նպաստի վճարումները կատարում է EDD Debit Card℠-ով կամ չեկով: EDD Debit Card-ը նպաստներ ստանալու ամենաարագ և ամենաապահով միջոցն է: Բայց պարտադիր չէ ընդունել EDD Debit Card-ը: Դիմեք EDD-ին, եթե ցանկանում եք նպաստները ստանալ թղթային չեկով:

Եթե նախկինում Ձեզ քարտ է տրվել Գործազրկության ապահովագրության (UI), Հաշմանդամության ապահովագրության (Disability Insurance) կամ Վճարովի ընտանեկան արձակուրդի (Paid Family Leave) նպաստների համար, և անհրաժեշտ է այն փոխարինել նոր քարտով, դիմեք Bank of America բանկի EDD Debit Card-ի հաճախորդների սպասարկման բաժին՝ զանգահարելով 1-866-692-9374 կամ 1-866-656-5913 (TTY):

➲ ՀԱՅՑԻ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

Դուք կարող եք Ձեր UI հայցը չեղյալ հայտարարել միայն այն դեպքում, եթե հայցը չի ավարտվել, *Notice of Determination* (Որոշման մասին ծանուցագիր) փոստով չի ուղարկվել, նպաստներ չեն վճարվել, և հայցի վերաբերյալ որևէ գերավճարում չի հաստատվել: Եթե Ձեր հայցը չեղյալ հայտարարվի, կարող եք նոր UI հայց ներկայացնել ավելի ուշ ամսաթվով: Եթե ուզում եք չեղյալ հայտարարել Ձեր հայցը, ԱՆՀԱՊԱՂ դիմեք EDD-ին: Դուք չեք կարող հայցը չեղյալ հայտարարել UI նպաստներ ստանալուց հետո, և չեք կարող նոր UI հայց ներկայացնել մինչև ընթացիկ հայցի ավարտը: Եթե վերադառնաք աշխատանքի կամ որոշ ժամանակաշրջանի ընթացքում չունենաք UI նպաստների կարիք, պարզապես այլևս մի հաստատեք Ձեր իրավունակությունը: Հետագայում կարող եք վերաբացել Ձեր հայցը, եթե դեռ տրվում են նպաստներ, և եթե հայցը չի ավարտվել:

➲ ՀԱՅՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Եթե նպաստների ստացումը դադարեցրել եք, և հիմա դարձյալ հարկավոր է հաստատել նպաստներ ստանալու իրավունակությունը, ՄԻ հետաձգեք հայցի վերաբացումը: Կարելի է հայցը վերաբացել UI Online℠-ով, հեռախոսով կամ ֆաքսով: Հայցը վերաբացելու ամենաարագ միջոցը UI Online℠ համակարգն է **www.edd.ca.gov/UI_Online** կայքէջում:

➲ ՆՊԱՍՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՈՒՄ

Ցանկացած հայցվոր, ով կեղծ տեղեկություններ է տրամադրում կամ տեղեկություններ է թաքցնում նպաստներ ստանալու նպատակով, կարող է կեղծ հայտարարությունների համար ենթարկվել իրավունքից զրկման տուգանքի, որով նրա նպաստները կմերժվեն 2-ից 23 շաբաթով: Բացի այդ, եթե որոշվի, որ հայցվորին գերավճար է տրվել, գերավճարված գումարին կավելացվի 30 տոկոս դրամական տուգանք:

EDD-ն կարող է նաև քրեական մեղադրանքներ ներկայացնել այն հայցվորի դեմ, ով խարդախություն է գործում՝ անօրինական ճանապարհով նպաստներ ստանալու նպատակով: Այդ մեղադրանքները կարող են հանգեցնել լրացուցիչ տուգանքների, տոկոսի և հնարավոր բանտարկության դատավճռի: EDD-ն խարդախության հայտնաբերման համակարգ է կիրառում այն հայցվորներին որոշելու համար, ովքեր աշխատում են և չեն զեկուցում իրենց վաստակները: Եթե կասկածներ ունեք, որ հնարավոր UI խարդախություն է կատարվում, այդ մասին կարող եք հաղորդել՝ զանգահարելով **EDD-ի Խարդախության մասին տեղեկացման թեժ գիծ** 1-800-229-6297 հեռախոսահամարով, կամ հաղորդել առցանց՝ օգտվելով «Դիմեք EDD-ին» (Contact EDD) հղումից **www.edd.ca.gov** կայքում:

➲ ՁԵՎԵՐ ԿԱՄ ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐ, ՈՐՈՆՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՔ

UI հայց ներկայացնելուց հետո նամակով կստանաք հետևյալ ծանուցագրերն ու ձևաթղթերը՝

- *Notice of Unemployment Insurance Claim Filed*, DE 1101 CLMT, (Ծանուցագիր ներկայացված գործազրկության ապահովագրության հայցի մասին). Այս ծանուցագիրը ներառում է UI հայցը ներկայացնելու ժամանակ Ձեր տրամադրած տեղեկությունները: Եթե որևէ տեղեկություն սխալ է, դիմեք EDD-ին ծանուցագրի փոստային առաքման թվականից հետո 10 օրվա ընթացքում:
- *Notice of Unemployment Insurance Award*, DE 429Z, (Ծանուցագիր Գործազրկության ապահովագրություն շնորհելու մասին). Այս ծանուցագիրը ներառում է տեղեկություններ Ձեր հայցի մասին, ներառյալ հասանելի նպաստի առավելագույն գումարը և Ձեր շաբաթական նպաստի գումարը (գումարը նախքան հանումները, որը ստանալու եք յուրաքանչյուր շաբաթ, եթե նպաստներ ստանալու իրավունք ունեք): Ծանուցագրի ներքևում տրված աղյուսակը ներառում է բազային ժամանակաշրջանում վաստակած այն բոլոր աշխատավարձերը, որոնք օգտագործվել են Ձեր հայցը հաստատելու համար: Եթե կարծում եք, որ ցուցադրված աշխատավարձերը սխալ են, դիմեք EDD-ին այս ծանուցագրի փոստային առաքման թվականից հետո 30 օրվա ընթացքում:
- *Continued Claim Form*, DE 4581, (Շարունակական հայցի ձև). Դուք կստանաք այս ձևը, որպեսզի հաստատեք նպաստների համար իրավունակությունը: Այս ձևը փոստով ուղարկելու փոխարեն՝ կարող եք իրավունակությունը հաստատել առցանց՝ օգտվելով UI Online℠ համակարգից, կամ հեռախոսով՝ օգտագործելով EDD Tele-Cert℠: Հաստատելու ամենաարագ, ամենահարմար և ամենապահով միջոցը UI Online℠ համակարգն է **www.edd.ca.gov/UI_Online** կայքէջում:
- *Notice of Requirement to Register for Work*, DE 8405, (Ծանուցագիր աշխատանքի համար գրանցվելու պահանջի մասին). Սույն ծանուցագիրը տեղեկացնում է CalJOBS℠-ում ընթացիկ ռեզյումե մուտքագրելու և վարելու պահանջի մասին, որպեսզի UI նպաստների վճարումներ ստանալու իրավունք ունենաք: CalJOBS℠-ն աշխատանքի տեղավորման ինտերնետային վիրտուալ կենտրոն է, որը մուտք է տրամադրում դեպի հազարավոր թափուր աշխատատեղերի ցուցակներ և գործիքներ, որոնք կօգնեն կառուցել Ձեր կարիերան: Այցելեք **www.CalJOBS.ca.gov**, որպեսզի գրանցվեք այսօր՝ այս ծրագրի պահանջը բավարարելու համար:
- *Employment Development Department (EDD) Customer Account Number*, DE 5614, (Հաճախորդի հաշվեհամար). Այս ծանուցագիրը տրամադրում է եզակի, 10 նիշանի պատահականորեն ընտրված համար, որն օգտագործվելու է UI Online℠ համակարգում գրանցվելիս: EDD-ի Հաճախորդի հաշվեհամարը լրացուցիչ նախազգուշական միջոց է, որը նախատեսված է Ձեր ինքնությունը պաշտպանելու և խարդախությունը կանխելու ու հայտնաբերելու համար:

Հնարավոր է, որ, վերը նշվածներից բացի, ստանաք նաև այլ ձևեր ու ծանուցագրեր, եթե Ձեր դիմումի հետ կապված հարցեր լինեն, եթե EDD-ն Ձեզ նշանակել է իրավունակությունը որոշելու հեռախոսային հարցազրույց, կամ եթե EDD-ին լրացուցիչ տեղեկություններ են անհրաժեշտ Ձեր ինքնությունը ստուգելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄ

America's Job Centers of California℠ (AJCC) կազմակերպության միջոցով հասանելի են աշխատանքի տեղավորման ու վերապատրաստման ծառայություններ: Ձեր մոտակայքում գրասենյակ գտնելու համար այցելեք **www.edd.ca.gov/Office_Locator** կայքէջը:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

Կալիֆորնիա նահանգի Վերապատրաստման նպաստները (California Training Benefits, CTB) գործազրկության ապահովագրություն (Unemployment Insurance, UI) ստանալու իրավունք ունեցող հայցվորներին հնարավորություն են տալիս շարունակելու իրենց կրթությունը, կատարելագործելու հմտությունները և (կամ) նոր արհեստ սովորելու UI նպաստներ ստանալու ընթացքում: CTB-ի, ինչպես նաև իրավունակության և դիմելու ընթացակարգի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար այցելեք **www.edd.ca.gov/CTB** կայքէջը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այցելեք **www.edd.ca.gov/unemployment**, որպեսզի լրացուցիչ տեղեկատվություն ստանաք UI ծրագրի և այլ ծանուցագրերի մասին, որոնք հավանաբար կարող եք ստանալ: UI նպաստների հետ կապված իրավունքների և պարտականությունների մասին ավելի մանրամասն տեղեկություններ և հատուկ ծրագրերի կամ զբաղվածության ծառայությունների մասին տեղեկատվություն ստանալու համար կարդացեք UI ձեռնարկը՝ *A Guide to Benefits and Employment Services*, DE 1275A, (Նպաստների և աշխատանքի որոնման ծառայությունների ուղեցույց): Կարող եք ձեռնարկը դիտել կամ պատվիրել առցանց՝ այցելելով **www.edd.ca.gov/forms** կայքէջը: Ընտրեք որոնման չափանիշները՝ «Հիմնաբառ(եր) կամ Ձևի համար» (Keyword(s) or Form Number), «Ձևաթղթի տեղորոշիչ» (Form Locator) վանդակում մուտքագրեք "DE 1275A" ձևի համարը և ընտրեք «Որոնել» (Search) կոճակը:

ԴԻՄԵՔ EDD-ԻՆ

Եթե ունեք որևէ հարց, որը չի շոշափվել մեր EDD-ի կայքում, և լրացուցիչ տեղեկատվության կամ օգնության կարիք ունեք, օգտվեք UI Online℠ համակարգից: UI Online℠ համակարգը գործում է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Դա հարցեր տալու և տեղեկություններ ստանալու ապահով և գաղտնի միջոց է: Այցելեք **www.edd.ca.gov/UI_Online** և գրանցվեք UI Online℠ համակարգում՝ առցանց հաղորդագրություն ուղարկելու համար:

ՍԻ Ինքնասպասարկման հեռախոսագիծ
Հասանելի է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր
Անգլերեն և իսպաներեն
1-866-333-4606

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԱՇԽԱՏՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՍԻ Հաճախորդների սպասարկում
Հասանելի է 8:00-ից մինչև 12:00, երկուշաբթիից մինչև ուրբաթ

Անգլերեն	1-800-300-5616
Իսպաներեն	1-800-326-8937
Կանտոներեն	1-800-547-3506
Մանդարին	1-866-303-0706
Վիետնամերեն	1-800-547-2058
TTY	1-800-815-9387

EDD-ն ունի ներկայացուցիչներ, ովքեր կարող են Ձեզ օգնել այլ լեզուներով: Եթե օգնության կարիք ունեք և ցանկանում եք EDD-ի ներկայացուցչի հետ խոսել այլ լեզվով, զանգեք հաճախորդների սպասարկման համարներից մեկով և խնդրեք Ձեր նախընտրելի լեզվի թարգմանիչ տրամադրել:

EDD-ն հավասար հնարավորություններ ընձեռող գործատու-ծրագիր է: Ըստ պահանջի՝ օժանդակ օգնություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամ անհատներին: Պահանջի դեպքում, լրացուցիչ աջակցություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամ անձանց համար: Ծառայությունների, օգնության և (կամ) այլընտրանքային ձևաչափերի վերաբերյալ հարցումները պետք է կատարվեն վերը նշված համարներով զանգահարելու միջոցով: